# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

# ՀՐԱՄԱՆ

Թիվ 44-Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ԹԻՎ 12-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2019 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» թիվ 12-Լ հրամանով (այսուհետ՝ հրաման) հաստատված հավելվածի՝

3.2 ենթախումբը լրացնել նոր 562-րդ կետով.

«562. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արարատի մարզային վարչության Մասիսի բաժնի առաջատար մասնագետ-գլխավոր հաշվապահ (ծածկագիր՝ 03-Հ-3.2-562):»

2. Ուժը կորցրած ճանաչել հրամանով հաստատված հավելվածի 3.1 ենթախմբի 21-րդ կետը, 3.2 ենթախմբի 488-րդ և 489-րդ կետերը:

3. Հրամանը հայտարարել ՀՀ ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին և քաղաքացիական հատուկ ծառայության ծառայողներին:

ԳՆԴԱՊԵՏ Վ. ՂԱՋԱՐՅԱՆ

«29» 12 2020թ.

ք. Երևան